

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

*Posted on December 31, 2022 by Keghart*



Category: [Opinions](#)



**Դավիթ Դավիթյան**, Երևան, 17 դեկտեմբեր 2023

*Ներքոհիշյալ գրությունը պատշաճեցված է անգլերեն բնագրից՝  
[Precedents for Europe on Azerbaijan's Conquest of Nagorno-Karabakh](#)*

Չնայած [տարածքային ամբողջականության](#) և ազգային ինքնորոշման միջև անվերջ թվացող դասական բանավեճին, միջազգային իրավագիտությունը, այնուամենայնիվ, բոլոր ժողովուրդներին տալիս է ինքնորոշման իրավունք:

Միջազգային հանրությունը [ենթադրաբար](#) աջակցում և ուշադրություն է դարձնում վերականգնողական տարանջատմանը: Միջազգային իրավունքի վերականգնողական տարանջատման դոկտրինը պետության մեջ գտնվող խմբին իրավունք է տալիս անջատվել և ստեղծել սեփական անկախ պետությունը՝ ի պատասխան մարդու իրավունքների կոպիտ և շարունակական ոտնահարումների կամ կենտրոնական կառավարության կողմից իրենց հիմնարար իրավունքների ժխտման: Այս գաղափարը վիճարկում է պետական ինքնիշխանության և տարածքային ամբողջականության ավանդական սկզբունքները՝ ենթադրելով, թե որոշակի հանգամանքներում միջազգային հանրությունը կարող է ճանաչել որոշակի խմբի իրավունքը՝ անջատվելու իրենց հիմնական իրավունքները խախտող պետությունից:

Գոյություն ունեն էր Լեռնային Ղարաբաղի հայերի վերականգնողական անջատումը, հաշվի առնելով, որ Կարմիր բանակը գաղութացրել էր Հարավային Կովկասը, և սովետական ղեկավարությունը 1921 թվականին 95% հայ բնակչությունն ունեցող այս շրջանը դրել էր Ադրբեջանի իրավասության տակ: Թեև ինքնավար կարգավիճակով, Սովետները հանգստացնում էին հայերին, պատրանք տալով, որ նրանք հավերժ կունենան իրենց հողը: Սովետական վերահսկողության մեխանիզմից բացի, ինչո՞ւ համարյա մոնոթեթևիկ տարածաշրջանի իրավասությունը տրվեց ռազմատենչ կողմին:

1915թ.-ին թուրքերի կողմից հայերի ցեղասպանությունը վերապրածների արդարության պահանջները ինչպես Խորհրդային Միությունը, այնպես էլ Թուրքիան պետք է ճնշեին՝ յուրաքանչյուրը պաշտպանելով իր շահերը: Թուրք-ադրբեջանական սոր էթնոսի ձևավորումը և Հայաստանի իրավասության տակ գտնվող տարածքների կրճատումը հիմք են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի տարանջատմանը 1921թ.-ին: Մինչ օրս «հայկական» եզրույթը նվաստացուցիչ է ոչ միայն թուրքական հասարակության մեջ, այլև Ադրբեջանում. անձը որքան հայատյաց է, այնքան հայրենասեր է համարվում Ադրբեջանում: Այս սոցիալականացումը ամրագրված է [ադրբեջանական կրթական համակարգում](#) և այսօր արտահայտվում է [Ադրբեջանի ղեկավարների](#) խոսքում, որոնք կոչ են անում [ամբողջությամբ վերացնել հայերին](#):

Ղարաբաղյան Առաջին պատերազմում (1988-1994 թթ.) Լեռնային Ղարաբաղի և այլ շրջանների հարավում մինչև Իրանի սահմանը ձգվող ճանաչված ինքնավարության հասնելու Հայաստանի ձգտումները երբեք չեն իրականացվել՝ չունենալով անհրաժեշտ դիվանագիտություն «վերականգնողական անջատում» ձեռք բերելու համար: [Ալմա-Աթայի հռչակագիրը](#) հիմք հանդիսացավ գոյություն ունեցող խորհրդային սահմանների միջազգային ճանաչման համար: Ըստ նրա՝ Լեռնային Ղարաբաղը համարվում էր Ադրբեջանի կազմում: Հաշվի առնելով զգալի թվով էթնիկ խմբերի սահմանների հետ գրեթե յոթանասուն տարվա սովետական ձեռնածումները, այս հռչակագրի չընդունումը կստեղծեր սարսափելի քաոս, որը կարող էր տարածվել Եվրոպայի մեծ մասում: Նույնիսկ Ուկրաինայում Ռուսաստանի այսօրվա հատուկ ռազմական գործողության հետևանքով Լեհաստանը, Հունգարիան, Ռումինիան և մյուսները պահանջներ են ներկայացրել Ուկրաինայի տարածքի նկատմամբ՝ առնվազն պահանջելով մշակութային ինքնավարություն իրենց համապատասխան փոքրամասնությունների համար: Այդպիսով Ալմա-Աթան կոդավորեց գոյություն ունեցող խորհրդային հանրապետությունների սահմանների միջազգային ճանաչումը՝ ստեղծելով ինքնավարության սահմանափակման և ԵՄ-ում պետական սահմանների նման անջատողական ինքնորոշման նախադեպ:

Երբ Ադրբեջանը 2020 թվականի աշնանը Ղարաբաղյան Երկրորդ պատերազմում իր վերահսկողության տակ վերցրեց Լեռնային Ղարաբաղի մեծ մասը, տեղի ունեցավ միջազգային դիվանագիտական բանավոր վրդովմունք, բայց որևէ պետություն չընդդիմացավ Ադրբեջանի գործողություններին, որքան էլ [բարբարոսական](#) էին դրանք: Ադրբեջանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ չկիրառվեցին, որևէ երկիր չօգնեց Լեռնային Ղարաբաղի հայերին, որոնք մեկ սերունդ առաջ իրենց հռչակել էին անկախ, ինքնակառավարող միավոր, թեև միջազգային ճանաչում չունեցող: Ադրբեջանի կասայան գազի հսկայական պաշարների Եվրոպա արտահանումը կանխեց Բաքվի դեմ տնտեսական պատժամիջոցների ամեն հնարավորություն:

Չնայած Հայաստանը [ՀԱՊԿ-ի](#) անդամ է, Ռուսաստանը որևէ օգնություն չի առաջարկել Հայաստանին կամ Լեռնային Ղարաբաղի հայերին, պնդելով, որ մարտը մղվում է Ադրբեջանի ինքնիշխան տարածքում: Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղի յուրացումից բացի, մինչև 2023 թվականի ամառ, ադրբեջանական զինուժը զավթել էր գրեթե [150 քառակուսի կմ տարածք](#) Հայաստանի միջազգայնորեն ճանաչված և Ալմա-Աթայի հռչակագրում նշված սահմանների ներսում: Հետագայում աշխարհի խոշոր տերությունները Ադրբեջանին ուղղված կոչեր հնչեցրին՝ հարգելու Հայաստանի ինքնիշխանությունը: Ադրբեջանին մարտահրավեր նետող պետությունների շարքում էին [ԵՄ-ի](#) երկրները, հատկապես՝ Ֆրանսիան, ԱՄՆ-ը, [Իրանը](#) և [Չինաստանը](#): Մասնավորապես, Ֆրանսիան կոչ արեց դուրս բերել ադրբեջանական զորքերը Հայաստանից:

Հայաստանի ինքնիշխանության անջակցության այս հայտարարությունները ուղղված էին պաշտպանությանը ներկայումս ճանաչված սահմանների, այսինքն՝ պաշտոնական ազգային սահմանները, որոնք հաշվի չեն առնում ինքնորոշման իրավունքի միջազգային իրավաբանական դոկտրինը: Նույն պետությունները, ովքեր կոչ էին անում Ադրբեջանին ազատել ինքնիշխան Հայաստանի տարածքը, ամբողջական լուրջություն էին պահպանում Լեռնային Ղարաբաղի հարցում: Այդ պետությունները ցանկանում էին խուսափել անջատողական շարժումների և այլոց ինքնորոշման իրավունքի հռչակման առիթ ստեղծելուց: Եվրոպան ունի մոտավորապես հարյուր քսանհինգ գործուն, հստակ անջատողական շարժումներ, որոնք հետևանք են առաջին համաշխարհային պատերազմից հետո պետական սահմանների մոտավորապես երկու հարյուր հիսուն փոփոխություններին: Ազգային կառավարությունները վախենում են տարածքի նկատմամբ վերահսկողության, օգտակար հանածոների և բնական պաշարների հասանելիության կորստից, ռազմական հզորության և ինքնիշխան սահմանները պաշտպանելու կարողության թուլացումից և նմանօրինակ այլ մտահոգություններից:

Եվրոպայում անջատողականությունն ու տարածքային հայրենասիրությունը լայնածավալ և բազմակողմանի են, ինչի մասին վկայում են Կատալոնիան, Բասկերի շրջանները՝ Իսպանիայի և Ֆրանսիայի սահմանների երկայնքով, Շոտլանդիան, Ֆլանդրիան և այլն: Մյուս շարժումներն եռանդուն հետապնդում են տարածաշրջանային ինքնավարություն, հատկապես Իտալիայի Լոմբարդիայում և Վենետոյում, որտեղ պահանջում են կառավարել՝ հաշվի առնելով տեղի ժողովրդի շահերը՝ համաձայն սեփական նախաձեռնությունների: Վերջին տարիների մյուս անջատողական շարժումները նպաստել են դե ֆակտո կարգավիճակ ունեցող կառույցների ստեղծմանը, ինչպիսին է Կոսովոն (ՆԱՏՕ-ի ստեղծմամբ) և Թուրքիայի ընդլայնված ներկայությունը Հյուսիսային Կիպրոսում:

Հասկանալի է, որ Եվրոպայում, բացի ՆԱՏՕ-ի՝ Կոսովոյի հարկադիր ստեղծումից, որպես Ռուսաստանի դաշնակից Սերբիայի նսեմացման միջոց, կա հստակ ճնշում չստեղծելու որևէ հաջող անջատողական կամ վերահսկողության շարժումների առիթ: Այսպիսով, զարմանալի չպետք է լինի, որ Եվրոպան ոչ միայն ճնշում չգործադրեց Ադրբեջանի վրա՝ դադարեցնելու իր 2020 թվականի պատերազմը, այլև աչք փակեց, երբ ադրբեջանական զինուժը 2023թ.-ին 120.000 հայերի բռնի ուժով վտարեց:

Փաստաթղթերը, ինչպիսին է ՆԱՏՕ-ի՝ Կոսովոյի ալբանացիներին «սերբական ճնշումներից» «ազատագրելու» պատրվակ օգտագործված [Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը](#), կարծես թե անտեղի էին 2023 թվականի սեպտեմբերին, երբ Ադրբեջանը 120.000 հայերի արտաքսեց Լեռնային Ղարաբաղից: Ավելի վատ կլիներ 120 հազար արցախահայության ամբողջական ոչնչացումը: 120.000 հայերի բռնի տեղահանումը ենթադրում էր ամբողջ տարածաշրջանի լայնածավալ ֆիզիկական շրջափակում, սով, ջրամատակարարման դադարեցում, Էլեկտրականության ու կապի

անջատում և մշտական հարձակումներ խաղաղ հայերի դեմ: Այս գործողությունները, բոլորն էլ, ցեղասպանության դրսևորումներ են ըստ միջազգային իրավունքին:

Գոյություն ունեցող աշխարհակարգին ձեռնտու չէր, որ [Արցախի Հանրապետությունը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը](#) լինի հաջողությամբ ճանաչված միավոր, չնայած հայկական աշխուժ կամ իրավասու դիվանագիտության ահավոր բացակայությանը: Այսպիսով, Ռուսաստանը, իր սեփական շահերից, իսկ ԵՄ-ը՝ նախադեպ ստեղծելու վախից ելնելով, դիտեցին, թե ինչպես էր Ադրբեջանը իրագործում Լեռնային Ղարաբաղի հայերի էթնիկ գտումները: Միջազգային աշխարհաքաղաքական շահերը գերակշռում են մնացած ամեն ինչին:

Չնայած անջատողական շարժումների դիմադրությանը, ազգերի վերոհիշյալ ցանկության մեկ այլ կողմ կա: Քանի որ երկրները պայքարում են աշխարհի բնական պաշարների հասանելիության և վերահսկման համար, Եվրոպան հատկապես գիտակցում է իր խոցելիությունը և կախվածությունը Արևելքից՝ իր Էներգիայի համար:

Ուկրաինայում ԱՄՆ-ի հրահրումների և Ուկրաինայի նկատմամբ Ռուսաստանի անողորմ ճնշումների դիմաց Եվրոպայի միամիտ և անպարկեշտ վերաբերմունքի հետևանքով, Եվրոպան եռապատիկ-քառապատիկ ավելի թանկ է գնում ռուսական Էներգակիրներ, որոնք այժմ մատակարարվում են Ադրբեջանով և Թուրքիայով անցնող խողովակաշարերով: Ադրբեջանին վրդովեցնելը վտանգավոր քայլ կլիներ Եվրոպայի համար:

Բաքուն, ոգևորված միջազգային հանրության սառը անգործությունից և խրախուսված [Ռուսաստանի հետ համագործակցության համաձայնագրերից](#), ինչպես նաև [Ռուսաստանի՝ հայերին արհամարիելու](#) պատճառով, ուժեղացնում է իր հռետորաբանությունը և պնդում, որ միջազգայնորեն ճանաչված Հայաստանի հարավային հատվածն իսկապես մտացածին ադրբեջանականի մի մասն է:

Հավանաբար, տարածաշրջանային անկայունության վախից, որը կարող է ողջ Կովկասում, Հարավային Կովկասում և Նույնիսկ Մերձավոր Արևելքում վերածվել լայնածավալ քառսի և պատերազմի, ԱՄՆ-ն սկսել է ճնշում գործադրել Ադրբեջանի վրա՝ [2023 թվականի Հայոց պաշտպանության ակտի տեսքով](#): Չուզահեռաբար [Ֆրանսիան](#) և [Հնդկաստանը](#) Հայաստանին վաճառել են ռազմական տեխնիկա: [Բաքուն հակադարձել է՝](#) փակելով USAID-ի գրասենյակը Ադրբեջանում: Այս ճնշումը, հավանաբար, պետք է ստիպեր Ադրբեջանին խաղաղության պայմանագիր կնքել Հայաստանի հետ՝ համարելով, որ Բաքուն հետագա նախահարձակման համար պատրվակներ է ստեղծում Հայաստանի վրա լայնածավալ ներխուժման համար՝ խախտելով վերջինիս ճանաչված տարածքային ամբողջականությունը: Ադրբեջանի վրա ճնշումը և դեպի Հայաստան արևմտյան ակնհայտ ուղղվածությունը խրախուսում են Հայաստանին՝ Է՛լ ավելի հեռանալ իր ռուսական ուղեծրից:

**Դավիթ Դավիթյան** Հայաստանի Ամերիկյան Համալսարանի դասախոս է: Նա ավելի քան մեկ տասնամյակ անցկացրել է տեխնիկական հետախուզական վերլուծություններ անելով տեխնոլոգիական խոշոր ընկերություններում: Բնակվում է Երևանում:

**There are no comments yet.**